Հաշվետվություն
2025 թվականի օգոստոսի 17-ից 22-ը Կանադա (Վանկուվեր) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Մարիամ Պետրոսյան, Կադաստրի կոմիտեի ղեկավարի խորհրդական:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Վանկուվեր, Կանադա օգոստոսի 17-ից 22-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   Միջազգային քարտեզագրական ասոցիացիա:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն 32-րդ միջազգային քարտեզագրական կոնֆերանսին (ICC 2025):

5. **Քննարկված թեմաները.**

Կոնֆերանսի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

- քարտեզագրության և աշխարհագրական գիտությունների ժամանակակից զարգացումները՝ արհեստական բանականության կիրառումը քարտեզագրության մեջ (GeoAI),
- կրթություն և վերապատրաստում քարտեզագրության ոլորտում,
- տարածական տվյալների վերլուծություն և մոդելավորում,
- ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքների զարգացում,
- քարտեզագրության ստանդարտներ,
- թվային երկրի ստեղծման կարևորությունը,
- կայուն զարգացման նպատակով քարտեզագրության կիրառումը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Օգոստոսի 18-ին մասնակցել եմ «Աշխարհագրական արհեստական բանականության», «Կրթություն ու վերապատրաստում», «Քարտեզագրության ստանդարտներ» տեխնիկական նիստերին և ICC 2025 պաշտոնական բացման արարողությանը:

Կոնֆերանսի բացման միջոցառումը սկսվեց Էմանուել Ստեֆանակիսի՝ ICC 2025 կոնֆերանսի տնօրենի ողջույնի խոսքով, որին հաջորդեց բացման հիմնական զեկույցը՝ «Թվային Երկիրը որպես թվային երկվորյակ»: Զեկույցը ներկայացրեց Մայք Գուդչայլդը՝ Կալիֆոռնիայի համալսարանի աշխարհագրության պրոֆեսորը:

Օգոստոսի 19-ին մասնակցել եմ «Աշխարհագրական արհեստական բանականության», «Տարածական տվյալների վերլուծություն», «Տարածական վերլուծություն և մոդելավորում» և «Քարտեզագրության համար ինտեգրված տարածական տեղեկատվություն» տեխնիկական նիստերին: Հիմնական զեկույցների նիստի ընթացքում ներկա եմ գտնվել երկու կարևոր զեկույցների. առաջինը՝ Ռայլան ՕՔրեյնի կողմից ներկայացված «Առաջին ազգերի, ինուիտների և մետիսների տարածական տվյալների ինքնիշխանություն և կառավարում» զեկույցը, որտեղ նա ներկայացրեց, թե ինչպես են տարբեր բնիկ ժողովուրդներ և կազմակերպություններ հաստատում իրենց իրավունքները տվյալների սեփականության և հասանելիության վերաբերյալ: Երկրորդ զեկույցը ներկայացրեց պրոֆեսոր Ռենժոնգ Գուոն (Շենժենի համալսարան)՝ «Պան-քարտեզագրություն. ընդլայնված տեսական շրջանակ գեոտեսանելիության համար» թեմայով: Նա ներկայացրեց, որ քարտեզները մարդկային քաղաքակրթության և՛ նվաճում են, և՛ շարժիչ ուժ:

«Քարտեզագրության համար ինտեգրված տարածական տեղեկատվություն» տեխնիկական նիստի ընթացքում հանդես եմ եկել զեկույցով, ներկայացնելով *«Հայաստանում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի հիմքի ստեղծում. ներկա իրավիճակը և ապագա հեռանկարները»* խորագրով զեկույցը: Զեկույցի ընթացքում ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականից շարունակական իրականացվող տարածական տվյալների ոլորտի բարեփոխումները, իրականացված աշխատանքներն ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման և գործարկման ուղղությամբ:

Օգոստոսի 20-ին մասնակցել եմ «Ատլասներ և աշխարհագրական արհեստական բանականություն» տեխնիկական նիստին, Հիմնական զեկույցների նիստին, Միջազգային քարտեզագրական ասոցիացիայի կողմից երիտասարդ գիտնականներին կրթաթոշակների շնորհման արարողությանը, «Կայուն զարգացման քարտեզագրություն», «Գեովիզուալիզացիա» տեխնիկական նիստերին:

Հիմնական զեկույցների նիստը սկսվեց Գեորգ Գարտների՝ Միջազգային քարտեզագրական ասոցիացիայի նախագահի բացման խոսքով: Այնուհետև ներկայացվեցին երկու հիմնական զեկույցներ: Առաջին զեկույցը՝ «Քարտեզագրություն բնիկների բնապահպանական արդարության համար», ներկայացրեց Ռայան Է. Էմանուելը՝ Դյուկի համալսարանի հիդրոլոգիայի պրոֆեսորը: Երկրորդ զեկույցը՝ «Պատմական քարտեզների փոխակերպումը համակարգչային վիզուալիզացիայով, VR/AR և արհեստական բանականության միջոցով», ներկայացրեց Էվան Թորնբերին՝ Դեվիդ Ռամսիի քարտեզագրական կենտրոնի ղեկավարը, Ստենֆորդի համալսարանի աշխատակից:

Օգոստոսի 21-ին մասնակցել եմ «Քարտեզների նախագծում և հասանելի տվյալներ», «Թեմատիկ քարտեզագրություն և քարտեզագրում», «Քարտեզագրության համար ինտեգրված տարածական տեղեկատվություն և ինտեգրված տարածական տվյալներ և վերլուծություններ», «Գեովիզուալիզացիա» և «Տարածական տվյալների վերլուծություն» տեխնիկական նիստերին և հիմնական զեկույցների նիստին: Հիմնական զեկույցների նիստի ընթացքում ներկայացվեցին

երկու հիմնական զեկույցներ: Առաջին զեկույցը՝ «Օգտատերերի կողմից ստեղծված քարտեզներից այն կողմ. որտեղ ամբոխային բանականությունը հանդիպում է արհեստական բանականությանը», ներկայացրեց Ալեքսանդր Ցիպֆը՝ Հայդելբերգի համալսարանի աշխարհագրական գիտությունների պրոֆեսորը և ամբիոնի ղեկավարը: Նա քննարկեց, թե ինչպես են օգտատերերի կողմից ստեղծված քարտեզները, հատկապես OpenStreetMap-ը (OSM), տարիների ընթացքում դարձել կիրառելի տարբեր երկրներում: Երկրորդ զեկույցը՝ «Տվյալներից մինչև հայտնագործություն. բաց քարտեզներ, բաց մտքեր և անսահման հնարավորություններ», ներկայացրեց Էմի Ռոուզը՝ Overture Maps Foundation-ի տեխնիկական տնօրենը:

Օգոստոսի 22-ին մասնակցել եմ հիմնական զեկույցների նիստին և «Տարածական վերլուծություն և մոդելավորում» տեխնիկական նիստին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

«Հայաստանում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի հիմքի ստեղծում. ներկա իրավիճակը և ապագա հեռանկարները» խորագրով զեկույցը Կոնֆերանսի գիտական հանձնաժողովի կողմից ընդունվել է տպագրման Միջազգային քարտեզագրական ասոցիացիայի պաշտոնական պարբերականում:

Օգոստոսի 20-ին տեղի ունեցած Միջազգային քարտեզագրական ասոցիացիայի երիտասարդ գիտնականների կրթաթոշակների շնորհման արարողության ընթացքում Միջազգային քարտեզագրական ասոցիացիայի ղեկավարությունը, գնահատելով գիտական նվիրումը և աջակցելով մասնագիտական ուղու զարգացմանը քարտեզագրության և աշխարհագրական գիտությունների ոլորտում, ինձ շնորհել է կազմակերպության հեղինակավոր կրթաթոշակը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է ակտիվորեն շարունակել համագործակցությունը Միջազգային քարտեզագրական ասոցիացիայի շրջանակներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Մարիամ Պետրոսյան 25.08.2025 թ.